

3.1 Միավորի բերման մեթոդով արագության որոշումը

Երեխայի հետ զբաղվողին

1. Գնացքը 5 ժամում 450 կմ անցավ: Այն 1 ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:

Գնացքը 5 ժամ է շարժվել և, իվերջո, 450 կմ է անցել: Ամեն ժամում նույնքան ճանապարհ է անցել: Այսպես՝



Այսինքն՝ 5 հատ ի՞նչ քիվն է հավասար 450: 5 հատ 90-ը: Ուրեմն ամեն ժամում 90 կմ է անցնում:

Կամ էլ՝ եթե 5 ժամում 450 կմ է անցնում, ապա 1 ժամում՝ 5 անգամ քիչ ժամանակում, 5 անգամ քիչ ճանապարհ կանցնի՝ 90 կմ ($450 : 5 = 90$):

2. Բեռնատար մեքենան 5 ժամում 195 կմ անցավ: Մարդատար մեքենան 3 ժամում 360 կմ անցավ: Ժամում մարդատար մեքենան էր ավելի անցնում, թե՞ բեռնատարը: Ինչքանով ավելի:

Բեռնատար մեքենան 5 ժամ շարժվել է և 195 կմ անցել: 5 ժամում 195 կմ է անցել, ուրեմն 1 ժամում (5 անգամ քիչ ժամանակում) 5 անգամ քիչ ճանապարհ է անցել: Այսինքն՝ $195 : 5 = 39$ (կմ):


Մարդատար մեքենան 3 ժամում 360 կմ է անցել, ուրեմն 1 ժամում 3 անգամ քիչ՝ 120 կմ է անցել ($360 : 3 = 120$):

Մարդատար մեքենան ժամում 120 կմ է անցել, իսկ բեռնատարը՝ ժամում 39 կմ: Նշանակում է մարդատարն ամեն ժամում $120 - 39 = 81$ կմ-ով ավելի է անցել:



Արի խնդիր լուծենք


1.



Նկարի օգնությամբ հաշվիր՝
 ա/ մեքենան քանի՞ ժամից Գ կետ հասավ,
 բ/ ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:

Մտու՛ր , 3 գույնով՝ գույնով 50 թղ:

2.



Նկարի օգնությամբ հաշվիր՝
 ա/ մեքենաները քանի՞ ժամից հանդիպեցին:
 բ/ բեռնատարը քանի՞ ժամից Գ վայրը հասավ:
 գ/ մինչև հանդիպման վայրը (Գ) մարդատար մեքենան քանի՞ կմ էր անցել:
 դ/ բեռնատարը ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:

Մտու՛ր , ու 4 գույնով: Ել 4 գույնով: Ի՛նչ 540 թղ: Ի՛նչ 30 թղ:



Հուշում

Շալ միշտ ծիր, թե ժամացույցները լիցի ի՛նչ են հուշում:




Ազատ Նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծած խնդիրներին նայիր: Կարդա, նկարն ուշադիր վերլուծիր ու խնդիրը հաստատ կլուծես:)



- ա) Բեռնատարը մինչև հանդիպումը քանի՞ ժամ է շարժվել:

բ) Բ կետից դուրս գալուց քանի՞ ժամ հետո է մարդատար մեքենան բեռնատարին հանդիպել:

գ) Մարդատարը մինչև հանդիպման Գ կետը քանի՞ կմ է անցել:



2.




- Մեքենաները քանի՞ ժամից հանդիպեցին:
- Մինչև Գ կետը բեռնատարը քանի՞ կմ է անցել:
- Մինչև Գ կետը մարդատարը քանի՞ կմ է անցել:

- ա) Մեքենաները քանի՞ ժամից հանդիպեցին:

բ) Մինչև հանդիպումը բեռնատարը քանի՞ կմ անցավ և քանի՞ ժամում:

գ) Մինչև հանդիպումը մարդատարը քանի՞ կմ անցավ և քանի՞ ժամում:

դ) Բեռնատարը ժամում քանի՞ կմ էր անցել:




4. ա) Մեքենաները քանի՞ ժամից հանդիպեցին:

բ) Մինչև հանդիպումը մարդատարը քանի՞ կմ անցավ և քանի՞ ժամում:

գ) Մինչև հանդիպումը բեռնատարը քանի՞ կմ անցավ և քանի՞ ժամում:

դ) Մարդատարը ժամում քանի՞ կմ էր անցել:



5. Ճանապարհորդն առաջին օրը 16 կմ անցավ, իսկ երկրորդ օրը՝ 8 կմ: Երկու օրում 8 ժամ շարժվեց (նույն արագությամբ): Ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:
6. Սկյուռը 5 ցատկով հասավ այն ծառին, որի վրա իր փշակն էր՝ 35 մ անցնելով: Սկյուռի ցատկի երկարությունն ինչքա՞ն էր:
7. Արշակը հեծանիվով 2 ժամում 36 կմ անցավ: Նա ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:
8. Ուղղաթիռը 2 ժամում 600 կմ անցավ: Ժամում քանի՞ կիլոմետր անցավ:
9. Դահուկորդը 5 ժամում 70 կմ անցավ: Ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:
10. Ուղտը 3 օրում 240 կմ քայլեց: Նա 1 օրում քանի՞ կիլոմետր անցավ:
11. Ջրոսաշրջիկները 2 օրում (նույն արագությամբ շարժվելով) 84 կմ անցան: Առաջին օրը 7 ժամ քայլեցին, երկրորդ օրը՝ 5 ժամ: Յուրաքանչյուր օր քանի՞ կիլոմետր անցան:
12. Շոգենավը 6 ժամում 900 կմ անցավ, իսկ գնացքը՝ 1080 կմ: Մի ժամում գնացքը շոգենավից ինչքանո՞վ էր ավելի անցնում:
13. Սպորտային մեքենան 6 ժամում 720 կմ անցավ, իսկ սովորական մարդատարը 4 ժամում՝ 240 կմ: Սպորտային մեքենան ժամում քանի՞ անգամ ավելի էր անցնում:
14. Ագռավը 3 ժամ թռավ՝ ժամում 50 կմ անցնելով: Սարյակը նույն հեռավորությունը 2 ժամում անցավ: Սարյակը ժամում քանի՞ կիլոմետր էր անցնում:
15. Ավտոբուսն ԱԲ ճանապարհը 5 ժամում անցավ՝ ժամում 48 կմ անցնելով: Նույն ճանապարհը վերադառնալիս 6 ժամում անցավ: Վերադառնալիս ժամում քանի՞ կիլոմետրով պակաս էր անցնում:



3.2. Մեծությունը մի քանի անգամ մեծացնելը, փոքրացնելը (ճանապարհի, ժամանակի որոշում)

Երեխայի հետ զբաղվողին

1. Տղաները ժամում 5 կմ արագությամբ 60 կմ անցան: Վերադառնալիս հեծանիվով 2 անգամ արագ էին շարժվում: Տղաները քանի՞ ժամում վերադարձան:

Տղաները գնացել են ժամում 5 կմ արագությամբ, իսկ վերադառնալիս 2 անգամ արագ են շարժվել, այսինքն՝ ժամում 2 անգամ ավելի՝ 10 կմ ($5 \text{ կմ} \times 2$) ճանապարհ են անցել: Եթե ամեն ժամում 10 կմ են անցել, ապա 60 կմ-ն անցնելու համար նրանց $60 : 10 = 6$ ժամ է անհրաժեշտ (1-ին ժամում 10 կմ, 2-րդ ժամում՝ հաջորդ 10 կմ-ը... մինչև 60 կմ-ը սպառվի):

Կարող էինք նաև այլ կերպ մտածել: Գնալիս ժամում 5 կմ են անցել, ուրեմն 60 կմ-ի վրա $60 : 5 = 12$ ժամ են ծախսել: Վերադառնալիս 2 անգամ արագ են շարժվել, ուրեմն նույն ճանապարհի վրա ոչ թե 12 ժամ, այլ 2 անգամ քիչ ժամանակ են ծախսել, այսինքն՝ 6 ժամ ($12 : 2 = 6$):

2. Մերենան առաջին օրը 9 ժամում 522 կմ անցավ: Երկրորդ օրը նույն կերպ 7 ժամ շարժվեց: Երկու օրում մերենան քանի՞ կիլոմետր անցավ:


Քանի որ 9 ժամում 522 կմ էր անցել, ուրեմն 1 ժամում (9 անգամ քիչ ժամանակում) 9 անգամ քիչ էր անցել՝ $522 : 9 = 58$ (կմ):

Ամեն ժամում 58 կմ էր անցնում, ուրեմն 7 ժամում (7 անգամ երկար ժամանակում) 7 անգամ շատ՝ 7×58 կմ ճանապարհ, այսինքն՝ **406 կմ**:



Արի խնդիր լուծենք

1.



Նավը քանի՞ կիլոմետր կանցնի 5 ժամում:

Մոմենտախառն, 90 թւ:

2.

Շոգենավը երկու օրում 15 ժամ նույն արագությամբ շարժվեց: Առաջին օրը 200 կմ անցավ, երկրորդ օրը՝ 175 կմ: Շոգենավը յուրաքանչյուր օրում քանի՞ ժամ էր շարժվում:

Կարող են նկարելով փեյ սօլնել:

Մոմենտախառն, 1-ից օճեն, 8 գույ: 5-ՆՆ օճեն, 1 գույ:

Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

1. Ժամում 35 կմ անցնող գնացքը մեկնումից 2 ժամ հետո տեղ հասավ: Գնացքը քանի՞ կիլոմետր անցավ:
2. Քաղաքից գյուղ տանող ճանապարհը 80 կմ է: Հետիոտները քանի՞ օրում քաղաքից գյուղ կհասնի, եթե օրական 40 կմ անցնի:



3. Չիավորը 28 կիլոմետրը քանի՞ ժամում անցավ, եթե ժամում 14 կիլոմետր էր անցնում:
4. Դահուկորդը ժամում 18 կմ էր անցնում: 3 ժամում քանի՞ կմ կանցնի:
5. Արտակը ժամում 18 կմ էր անցնում և Ա-ից Բ 3 ժամում հասավ: Նույն ճանապարհը քանի՞ ժամում կանցնեք, եթե ժամում 9 կմ անցնեք:
6. Մոտոցիկլավարը 540 կիլոմետրը քանի՞ ժամում կանցնի, եթե ժամում 90 կմ է անցնում:
7. Ավտոմեքենան 4 ժամում 240 կմ անցավ: Եթե ժամում 6 կիլոմետրով ավելի անցնի, 7 ժամում քանի՞ կիլոմետր կանցնի:
8. Գնացքը, որը ժամում 30 կմ էր անցնում, ԱԲ ճանապարհը 6 ժամում անցավ: Ավտոմեքենան, որը ժամում 45 կմ է անցնում, նույն ճանապարհի կեսը քանի՞ ժամում կանցնի:
9. Դահուկորդը 3 ժամ շարժվեց՝ ժամում 12 կմ անցնելով: Նույն ճանապարհը ես ինչքա՞ն ժամանակում կանցնեմ, եթե մի ժամում 6 կմ եմ անցնում:
10. Ինքնաթիռը 2 ժամում 960 կմ է անցնում: Նույն ճանապարհը քանի՞ ժամում կանցնի այն ինքնաթիռը, որը 2 անգամ արագ է թռչում:
11. Մի քաղաքից մյուսը հեծանվորդը 4 ժամում գնաց՝ ժամում 14 կմ անցնելով: Նույն ճանապարհը հետիտուն ինչքա՞ն ժամանակում կանցնի, եթե ժամում 7 կմ է անցնում:

